ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)460145
29 սեպտեմբեր 2021 թ. N 1555

Ա/Հ ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, Գ.ԳԵՂԱՔԱՐ,
2 ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 4

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Հայտնում ենք Ձեզ, որ Հրազդանի համայնքապետարանի և Ա/Հ Արտակ Մարտիրոսյանի միջև «Որակի տեխնիկական հսկողության ծառայություններ»-ի ձեռքբերման համար 10 օգոստոս 2021 թվականին կնքված թիվ «ԿՄՀՔ-ԳՀԽԾՁԲ-21/28» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ա/Հ Արտակ Մարտիրոսյանը չի կատարել ստանձնած պարտավորությունը:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և պայմանագրի 2.1.3 կետը՝ Հրազդանի համայնքապետարանը միակողմանի լուծում է «ԿՄՀՔ-ԳՀԽԾՁԲ-21/28» ծածկագրով պայմանագիրը: Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ծառայության մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կատարող՝ Ռ. Դանիելյան
Հեռ. (060) 460161